

Ս. ՅԱՎՈՐԻ ՆԵՐՍԷ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Յունուար ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյ ՏՅՕՐԻՆ Ժողովը վեց անդամներ ի նիստ գումարուեցաւ իրրի. Վարչական Մարմին, իսկ իրրիկ Կրօնական Պերագոյն Առեան՝ մէկ անգամ, Ուսումնական Խորհուրդը և Առտուածաշուճի հայերէն քաղցմամբուհիան զանաւորեց Յանուարի 28-ին յաջողակօրէն Կրօնական Մարմինը և Ս. Մարտիարի Կաթողիկոսը, որ իրաւասութեան մէջ եղած իրեն զիրենքով:

● Գլ. 1 Յուն. — Ըստ սովորութեան, Սրբազան Պատրիարք Հայրը Բարձր Գոմիսերին, Կառավարական պաշտօնեաներու և բոլոր Հիւպատոսներուն շնորհաւորական զիբ կամ քարզ զըրկեց ամանորի առթիւ:

-- Տ. Միքայիլ Սրբազան փոխադրուցաւ Քրանսական հիւանդանոց:

● Գլ. 2 Յուն. — Դպրիներու երեսուղէմի եպիսկոպոսը, Տ. Բասիլիոս, այցելեց Ս. Պատրիարքը Ներ:

— Երեկոյին գումարուեցաւ Միքայիլի Ընդհ. ժողով:

● Ել. 3 Յուն. — Ս. Պատրիարքը, Տ. Մեսրոպ և Տ. Ռուբէն Սրբազաններու, Տ. Միսն եւ Տ. Տիրայր Վարդապետներու և Տօթթ. Եղալըհանի հետ այցելեց Տ. Մատթէոս Սրբազանի, որ ձերբութեան եւ տկարութեան պատճառաւ կը մնբեր Երկքով:

● Ուր. 4 Յուն. — Յատալիկայ ծնունդի եւ կայանդի տներուն առթիւ սկսուեցաւ զպրօցներու արժակուրդը:

— Երեկոյին շարժապատի թափօրով Ս. Պատրիարքը առաջնորդուեցաւ Մայր Տանար, ուր կատարուեցաւ հանդիսաւոր նախատանակ Սըրբոյն Դանթի և Տեառնեղբոր տօնի առթիւ. յիստոյ թափօրով Պատրիարքարան կ'անցը:

● Ել. 5 Յուն. — Ս. Աթոռոյ տօնին առթիւ, ըստ սովորութեան, Ս. Պատրիարքը շքանշան ի բարձունաթի ատեն առաջնորդուեցաւ Առաքելական Աթոռ:

— Ս. Պատարագը մատոյց Պատր. Փոխանորդ Տ. Մկրտիչ Սրբազան, որ եւ խօսեցաւ օրուան քարզը, ներկայացնելով Տեառնեղբոր կեանքը, ս. գրական, պատմական եւ աւանդական սրբանքներու վրայ կրօնակալով, և բարոյական հետեւութիւններ հանելով Ս. Աթոռոյ ուղղութեան եւ գործունէութեան մասին: Ս. պատարագէն վերջ շնորհաւորութիւններ եղան Պատրիարքարանի մէջ:

● Կիր. 6 Յուն. — Ս. պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ. քարոզեց Տ. Նորայր Վարդապետ բացատրելով ծառայութեան սկզբունքին աւետարանական իմացումը:

— Իսլամաց բամազան պայրամին առթիւ Ս. Պատրիարքը այցելեց Միսթթի էֆէնտի. Նոյնպէս քարոզի թողուեցան իսլամ երեւելիներու տուները:

— Երեկոյին՝ հանդիսաւոր նախատանակ եղաւ վաղուան Ս. Ստեփանոսի տօնին առթիւ:

● Բլ. 7 Յուն. — Ս. Ստեփանոսի տօնը պաշտուեցաւ աւանդական շքերութեամբ. Էինք սարկապետներ եւ չորս ուրարակիրներ, սաղաւարտեայ եւ բուրվառակիր, հանդիսաւորեցին եւ հանդիսաւորուեցան: Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Ստեփանոսի պատմական հիւանդանոց մատուռին մէջ: Ս. Պատրիարքը քարոզեց, դասեր հանելով Ստեփանոսի կեանքէն եւ նկարագրելէն՝ եկեղեցւոյ պաշտօնէից համար:

● Գլ. 8 Յուն. — Երեկոյին նախատանակով եւ այսօր պատշաճ հանդիսաւորութեամբ պաշտուեցաւ Ռոզոս և Պետրոս սրբազան առաքելոց տօնը. Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի աջակողմեան ձեղնայարկի Ս. Պետրոս վերնատանուռին մէջ:

— Յետ Ս. Պատարագի, Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Տ. Մկրտիչ և Ռուբէն Սրբազաններու և ուր Վարդապետներու, աւանդական թափօրով շնորհաւորական այլի զնաց Յունաց Պատրիարքարանը, ձնունդի տօնին առթիւ, և պատուով ընդունուեցան շորքնորտ օտնապաշտէն և Միտոյի բոլոր անդամներէն:

● Գլ. 9 Յուն. — Երեկոյին, Ս. Պատրիարքը եւ Միքայիլի Ընդհ. ժողովը շնորհաւորութիւններով մտան ի Մայր տանար, ուր կատարուեցաւ մեծահանդէս նախատանակ, Գլխազրի դասին մէջ, Որդաց Ռոբոման վաղուան տօնին առթիւ:

● Ել. 10 Յուն. — Ամենամեծ շուքով պաշտուեցաւ Ս. Աթոռոյ Ուխտի տօնը. Ս. Պատրիարքը պատարագեց Գլխազրի սեղանին առջեւ, և քարոզեց, ներթ առնելով Յակոբոս Չերթեան առաքելի նախատանակութեան զատուց մը, ըզգածուած սրտիւ խօսեցաւ քարոզը, որ պիտի զբուր Վիտնի յառաջիկայ թիւին մէջ: Ս. Պատրիարքէն վերջը Մայր Տանարին մէջ կատարուեցաւ երբազարձ թափօրը կենաց Փայտի մատուցումով, որ Ս. Պատրիարքը Հայրը կը կրէր անկախութիւնի տակ: Ս. Պատարագին և թափօրին ներկայ էր մեծ բազմութիւն ժողովուրդի, և երեսուցէմի Անկիլիան Եպիսկոպոսը:

— Կէս օրէ վերջ, ժամը 3.30ին, ի Տէր հանգաւ Տ. Ստեփանոսի: Լողելոյս Սրբազանին մահուան եւ յուղարկուարութեան եւ կենսաքրութեան մասին տեսնել Վիտնի առ յա թիւի մահազբական էջը: — Շարքի մը սուգ տնորհուանցաւ, և վանական եւ զպրօցական հանդիսաւորութիւնը յայտուեցան և յետաձգուեցան:

● Ել. 12 Յուն. — Ալն. Տկն. Գ. Կիւղղէնդեան, որ իր եղբորը Գ. Երեսնդ էօպեանի հետ նաւթամաղ գիծերուն բացման առթիւ Լիբանան, Սիւրիա և Պաղեստին եկած էին, այցելուեցին Ս. Աթոռ:

— Տ. Միսն Վրդ. գնաց Յոպպէ, ամանորի առթիւ պատարագեցաւ և քարոզելու համար:

● Կիր. 13 Յուն. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, ուր քարոզեց Տ. Տիրան վրդ. տարեվերջի առթիւ ամանորական խորհրդածութիւններ ընկելով. բացատրեց թէ տարեգլուխը տօնելու օտարութիւնը՝ հոգեպէս նորոգուելու մարդկային բնազդին ծնունդն է:

— Երեկոյնի ժամերգութիւնէն վերջ, Միաբանութիւն և աշակերտ ներգայացանք Ս. Պատարաբքին, և անհանդէս լուսութեան մէջ ստացան մի մի օրացոյց:

● Բշ. 14 Յուն. — Ըստ հին Տոմարի Ամանորին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր-Տահարին մէջ. յետոյ առանց հանդէսի, Միաբանութիւն և աշակերտք Պատարաքարան ելան, ուր Ս. Պատարաբքը, Հանգ. Տ. Սմբատ Սրբազանի յիշատակին վշտագին ակնարկութեան մը վերջ, հակիրճ խրատական մը խօսեցաւ, շեշտելով կեանքը արժէքաւոր ընծայելու մեր քրիստոնէական պարտականութեանց վրայ:

— Կէս օրէ վերջ, Ս. Պատարաբքը և Տնօրէն Ժողովոյ անդամք գացին ժառանգաւորց վարժարան, ուր Ս. Պատարաբքը խրատական մը խօսեցաւ սարկաւազաց և աշակերտաց:

— Ամանորի առթիւ, Իրիտ. Բարձր Գոմիէզրին կողմէ շնորհաւորական այցելութեան եկաւ մասնաւոր պատուիրակ մը. Հիւպատոսներէն ու մանջ անձամբ և այլք նամակաւ ներկայացուցին իրենց շնորհաւորութիւնները:

● Ուր. 18 Յուն. — Ս. Ծննդեան տօնի ձրագալոյցի առաւօտուն, յոյժ ցրտաշունչ եւ ձիւնախառն օդով, Միաբանութեան և աշակերտներու մեծ մասը Բեթղեմէմ մեկնեցաւ՝ առանձազան հանդիսաւորութեամբ, դիւստրութեամբ Լուսարարացիս Տ. Մնարոյ Սրբազանի, որ պատարագեց Ս. Ալլի սեղանին վրայ, և քարոզեց Վերան եկն և իւրքն զնա ոչ ընկալանք բնարանով:

● Եր. 19 Յուն. — Ս. Պատարաբքը նախագահեց Մայր Տահարի ժամերգութեանց, և քարոզեց: Բացատրեց թէ Յիսուսի Ծնունդը մեզի համար պէտք է լինի տօն ոչ թէ յիշատակի՝ այլ ներկայ և ներքին փորձառութեան, անոր պէտք է նայիք ո՛չ թէ պատմութեան այլ բարոյականութեան տեսակէտով: Այսինքն պէտք է մուտադրուելիք ոչ այնքան անոր օր մը ծնած ըլլալու իրօնութեամբ՝ որքան այսօր ևս կամ ամէր օր անոր մեր հոգիներ կեանքին մէջ ճնշուլու հնարաւորութեամբը:

— Աւաւտեան ժամը տարնին միաբանք եւ աշակերտք վերադարձան Բեթղեմէմէն թափօրով երգելով Վերահուրք մեծնը: Ս. Պատարաբքը ամենքն ընդունեց Պատարաքարանի մեծ Դակիւհին մէջ, օրնութեամբ և փոխադարձ շնորհաւորութեամբ:

● Կիր 20 Յուն. — Մեռելոցի առթիւ Ս. Պատարաբքը քարոզեց Մայր-Տահարին մէջ, խօսեցաւ կեանքի և անհատութեան քրիստոնէական ճճրութեաներու մասին, բացատրելով նոյն ասեւն

թէ ի՛նչ և՛ն պարտականութիւնները, զորս անոնք կը թնդարնն հաւատացնալին:

— Ս. Ծննդեան մեր տօնին առթիւ, այսօր շնորհաւորական այցելութեան եկան Պատարաքարան՝ Յունաց տեղապահը, իր մտարարոյխաներով. Հատկաց պատրիարքարանի եպիսկոպոսը, ի հիւանդութեան Պատարաբքին, չորս վարդապետներով. Անկիլքան եպիսկոպոսին բացակայութեան պատճառով՝ իր փոխանորդը. Բոսերիլու վարդապետները, ի բացակայութեան եւ պիսկոպոսին, որ Պեկլրատ է մեկնած. Հայ կաթողիկոսներուն մեծաւորը և վարդապետ մը, Յոյն կաթողիկոսներուն մեծաւորը. Ս. Կուսի ննջման գերման զրացի վանքին մեծանորն ու վարդապետները, Հիւպատոսներ ու իւլամ երեսիկները:

● Բշ. 21 Յուն. — Ենթահաւորական այցելուեցաւ Ֆրանչիսկեան Միաբանութեան մեծաւորը, սուրբակայից Ժողովին բոլոր անդամներով, ապա Մարտնիներու մեծաւորը և իր փոխանորդը:

● Գշ. 22 Յուն. — Սպանիական նոր Հիւպատոսը իր զիւանսպետին հետ առաջին այցելութիւնը սուսաւ Ս. Պատարաբք չօր:

● Եր. 26 Յուն. — Ծննդեան ութօրէքի առթիւ, ըստ իրական սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, Պատարագին էր Տ. Ռուբին Սրբազան: Գարոզեց Ս. Պատարաբքը. Իմաստ մը ուղեւոր ջուշնեյ Ծննդեան տօնին՝ Ս. Գերեզմանի վրայ ևս կատարուելուն մէջ, զուգահիշը ըրաւ Բեթղեմէմի աստղին և Գողգոթայի խաչին, զորս իրենց խորքին մէջ կատարելապէս նոյն գաւառ. զի աստղը այն լուսաւորը եղաւ որ ծագեցաւ այբին մէջ պարտած տառապանքին վրայ, եւ խաչը այն իմաստութիւնը՝ որ կը լուսաւորէ սրտին համբան ցաւոյ այս հովիտին մէջ:

— Ս. Պատարագէն վերջ, Միաբանութիւնը թափօրով եկաւ Պատարաքարան, ուր կատարուեցաւ աւանդական Տնօրնէքը:

— Ծննդեան տօնի առթիւ, հոգևոր այցելութեան համար այսօր Տ. Առողի վրդ. եւ Ալատրի. մեկնեցան Աման, իսկ Տ. Յուսէկ Արեղայ և Յարութիւն օրկ. Գաղա:

● Կիր. 27 Յուն. — Մայր Տահարին մէջ քարոզեց Տ. Հայկազուն վրդ. ԱՄԻՆԳԵՆ յաշխարհի եմ լոյս եմ աշխարհին բնաբանով. բացատրեց թէ ի՛նչպէս՝ Քրիստոսի անձին պացցումը միայն կրնայ զմեզ լուսաւորել այն խաւարին մէջ, որով մեզքը՝ տրիստութիւնը և աշխարհի օին հրապարանքները կը լեցնեն մեր հոգին:

● Բշ. 28 Յուն. — Միաբանութեան անդամներէն Տ. Անդրէաս վրդ. վախճանեցաւ 75 ամեայ:

— Ս. Պատարաբքը փոխադարձ այցիլ գնաց ըսպանիական նոր Հիւպատոսին:

● Գշ. 29 Յուն. — Յուզարկաւորութիւն Տ. Անդրէաս վարդապետի: